



Զեկույց

Ղարաբաղյան պատերազմից տուժածների (փախստականներ, նախկին
ռազմագերիներ, անհայտ կորածների ընտանիքներ) շրջանում իրականացված
մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

«Երիտասարդ խաղաղասերների բրիգադի ձևավորում» ծրագիրն իրականացվում
է Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ՝
ՀՔԱ ադրբեջանական կոմիտեի. Լեռնային Ղարաբաղի «Հելսինկյան
նախաձեռնություն 92» ՀԿ համագործակցությամբ

Վանաձոր 2009

1



Լեռնային Ղարաբաղ

Փախստականներ

Հարցումն անց է կացվել Ղարաբաղում բնակվող 20 փախստականի շրջանում: Նրանցից 6-ն ունի բարձրագույն կրթություն, 2-ը՝ թերի բարձրագույն, մնացած 12-ն ունի միջնակարգ կրթություն:

Մինչ պատերազմը նրանցից 12-ն ապրում էր Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում, 1-ը՝ Բարդայում, 3-ը՝ Սումգայիթում, 2-ը՝ Ստեփանակերտում, 1-ը՝ Խնաբաղ գյուղում (Ասկերանի շրջան), հարցվածներից մեկը նախկին բնակության վայրը չի նշել:

Ծննդավայր

- Ադրբեջան, Բաքու
- Ադրբեջան, Բարդա
- Ադրբեջան, Սումգայիթ
- ԼՂ, Ասկերանի շրջան, գյուղ Խնաբաղ
- ԼՂ, Ստեփանակերտ

Բնակության վայր

- ԼՂ, Ստեփանակերտ
- ԼՂ, Ասկերանի շրջան, գյուղ Շոշ

Մեծամասամբ նրանք քաղաքաբնակներ էին: Փախստականներից 16-ն ամուսնացած է, ունեն երեխաներ: Նրանցից և ոչ մեկը որևէ ՀԿ կամ կուսակցության անդամ չէ: Հարցվածներից 8-ի ընտանիքի անդամները կենսաթոշակատուներ են, իսկ 6-ն էլ հաշմանդամ հարազատներ ունեն: Մինչ պատերազմը նրանք աշխատում էին տարբեր ոլորտներում՝ հիվանդանոցում, կապի ծառայությունում, գազի գրասենյակում: Այժմ էլ ունեն աշխատանք. Ղարաբաղում ստանում են միջինը 50.000 դրամ ամսական աշխատավարձ, աշխատում են դպրոցում, մանկապարտեզում, որպես քարտուղար, ինժեներ, դարաբաղցի փախստականներից ամենաշատ գումար ստանում է զինծառայողը՝ ամսական 74.000 դրամ, 21.500 դրամ էլ ստանում է մանկապարտեզի դաստիարակը:

Փախստականների ընտանիքի անդամների կեսից ավելին՝ 11, ևս աշխատում են: Թեև փախստականների երեխաները (11 հոգի) բարձրագույն կրթություն ունեն, այնուամենայնիվ, փախստականներից միայն 5-ն է մասնակցել վերապատրաստման դասընթացների:

1988թ. հակամարտության ամենաթեժ ժամանակահատվածում Բաքվի եւ մյուս շրջանների հայերը դառնում են փախստական:

Երբ եւ ինչ պայմաններում դարձաք փախստական

- 1988թ. , երբ սկսվեցին Բաքվի ջարդերը
- 1988թ., սումգայիթյան իրադարձությունների ժամանակ
- 1988թ.

20 հարցվողները փախուստի ժամանակ կարողացել են վաճառել կամ փոխանակել բնակարանը եւ, համարյա ոչինչ չվերցնելով (հիմնականում վերցրել են հագուստ), ընտանիքի անդամների, հարազատների հետ դիմում են փախուստի: Պատասպարվում են Հայաստանում, հետագայում մի մասը մնում է Հայաստանում, մյուս մասն էլ գնում Ղարաբաղ:

Ինչպիսին են Ձեր բնակարանային պայմանները

- սեփական տուն, 2 սենյակ, փոքր բակ, պայմանները միջին
- 4 սենյականոց բնակարան, 89մ², նորմալ պայմաններ
- 50մ² 8 մարդու համար, իհարկե, չի բավականացնում
- հանրակացարանում զբաղեցնում ենք 2 սենյակ
- կիսաքանդ սեփական տուն, մեկ սենյակ, խոհանոց և այլն
- նորմալ պայմաններ չկան
- մեկ սենյականոց բնակարան, կիսանկուղային, նորմալ պայմաններ չկան
- հանրակացարանում զբաղեցնում ենք մեկ սենյակ
- սեփական տուն, 3 սենյակ, լավ պայմաններ
- նորմալ պայմաններ, 42 մ²
- 3 սենյականոց բնակարան, նորմալ պայմաններ

Հարցված փախստականներից 11-ն ունի սեփական տուն կամ բնակարան, ընդհանուր առմամբ նրանք դժգոհ չեն իրեն կենցաղային պայմաններից: Մեծամասամբ նրանք ապրում են բազմանդամ ընտանիքներում, որովհետև գաղթից հետո հարցվածներից 17-ի ընտանիքների անդամների թիվը ավելացել է. նոր ամուսնություններ են գրանցվել, երեխաներ, թոռնիկներ են ունեցել:

Երբ եք ստացել փախստականի կարգավիճակ

- 1989թ.
- 1990թ.
- 1991թ.
- 2002-2003թթ., կոնկրետ չեմ հիշում
- 2004թ.
- 2005թ.
- չեն տվել
- չի հիշում
- 2 տարի հետո

Հարցվածներից 5-ը դեռ չի ստացել փախստականի կարգավիճակ, 8 հոգի ստացել է 2004թ-ին, հիմնականում փախստականի կարգավիճակ ստացել են 1989-1991թթ: Ստացել են առանց որևիցե խոչընդոտների: Հարցվածներից 17-ը նաև այլ պետությունների քաղաքացիներ են:

Նրանց մեծ մասը տեղեկացված չէ փախստականների իրավունքներից, չգիտեն էլ, բացի հեռուստացույցից, ինչ աղբյուրներից կարող են օգտվել, այդ իսկ պատճառով չեն օգտվում իրենց իրավունքներից:

Փախստականների նկատմամբ մարդիկ անտարբեր են: Նրանցից միայն կեսն է նշում, որ շրջապատի վերաբերմունքը հարգալից է: Նրանք ունեն աշխատանքի, բնակարանային, ֆինանսական խնդիրներ: Հարցված փախստականներից միայն մեկին է պետությունը ապահովել բնակարանով կամ տարածքով, 2 հոգու էլ ֆինանսապես է օգնել:

Հարցված փախստականների կեսը իրեն հասարակության լիիրավ անդամ է զգում, մյուս կեսին դա զգալու համար անհրաժեշտ է ապահովված լինել բնակարանով, աշխատանքով, ունենալ փող և կենցաղային նորմալ պայմաններ: Փախստականները պետությունից շատ պահանջներ չունեն. ընդամենը վերացնել գործազրկությունը, ապահովել բնակարաններով, լավացնել սոցիալ-տնտեսական վիճակը:

Այնուամենայնիվ, ըստ նրանց, փախստականն ինքն էլ կարող է ինչ-որ բան անել իր վիճակի բարելավման համար՝ պետությունից պահանջելով վերանայել այն օրենքները, որոնք վերաբերում են փախստականների սոցիալական եւ առողջապահական խնդիրներին, համագործակցել ՀԿ-ների հետ կամ ստեղծել սեփական ՀԿ-ն:

Եզրակացություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարկ է կատարել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված արդեն նախկին փախստականների հիմնախնդիրների լուծմանը.

- *բնակարանային* -ապահովել նրանց ու ընտանիքի նոր անդամներին բնակարաններով
- *սոցիալական* -նրանց և նրանց ընտանիքների անդամների համար ստեղծել աշխատանքի ընդունման դյուրացված համակարգ՝ հաշվի առնելով լեզվական,



ինչպես նաև մասնագիտական խնդիրները

- *կրթական* -անցկացնել դասընթացներ՝ ինչպես հայերենի մասնագիտացման, այնպես էլ վերամասնագիտացման համար
- *հոգեբանական*-նրանց համար կազմակերպել հոգեբանական աջակցության դասընթացներ՝ վերաինտեգրելու հասարակության մեջ, ինչպես նաև օգնելու հաղթահարել փախստականի կարծրատիպը
- *իրազեկման* -հասարակության լայն շրջաններում կազմակերպել հանդուրժողությանն ուղղված քննարկումներ՝ փոփոխելու փախստականների նկատմամբ արդեն կարծրացած բացասական վերաբերմունքը
- նրանց ծանոթացնել փաստականների միջազգային իրավունքներին՝ պարբերաբար կազմակերպելով լայն քննարկումներ ու դասընթացներ